*Որք ի սուրն քարշեցան,*
*Կանայք որդւովքն գերեցան:*
*Այս ամենայնի պատճառ է այն*
*Շամբուլըդին ամիրային,*
*Զոր սատանին արբանեկի*
*Եւ ի նեռին կարապետէ,*
*Որ նա արար հպարտութիւն,*
*Չհնազանդեցաւ Իսքանդարին:*
*Շատք որ սպան ու' անթաղ մնացին,*
*Ոչ հաց հոգւոյ՝ ոչ դրամ թողին.*
*Եւ որք գերի վարեալ գնացին,*
*Ցաւտար երկիր վըտարեցին,*
*Ի յայլազգին խառնակեցան,*
*Ըզչարութիւն նոցա ուսան:*

---

մօտերքը և յատկապէս Ծղակի և Աղաղի մօտ: Համտ. Միրախորեան, Անդ: «յԱղխթայ» ունի և Ալիշ. օր.: Վերոբերեալ երեք գիւղերից Թ. Մեծոփեցին միայն Ծղակն է յիշում:

395. Ալիշանի օր. «Այս ամենայն ի պատճառէ
Այն Համբղտին ամիրայէ»:

396. «Շամբըլըդին»—այսպէս իմ օրինակում. կարդալու չէ՞ Շամբշըթին, որ Բաղէշու Շամշատին ամիրան էր: Թ. Մեծ. էջ 83:

401. Ալիշան օր. «Շատ որք սպան»...:

402. Ալիշանի օր. . . . . ոչ դրամ հողին: